

Աստղիկ հոդվածաշար, N27

Երևան: Ս. Պարթև, 2016

Էջ 134-146:

Գայանե Մուրադյան

Գիտաֆանտաստիկ փոխաբերության ճանաչողառճական

առանձնահատկությունները

Սույն հոդվածում, կարևորելով փոխաբերության դերն ու նշանակությունը գիտաֆանտաստիկ ժանրում, այն դիտարկվում է որպես գիտաֆանտաստիկային բնորոշ ճանաչողական և երևակայական փոխաբերությունների միախառնման արդյունք, որպես «փոխաբերական միաձուլման» արգասիք, որի թարգմանելիությունը կապված է ոչ միայն գեղարվեստական պատկերների ճիշտ ընկալման և մեկնաբանման, այլև համընդհանուր, համամարդկային մտածական մոդելների իմացության հետ, որն էլ առավել դյուրին է դարձնում գիտաֆանտաստիկ փոխաբերության թարգմանությունը:

Բանալի բառեր. գիտաֆանտաստիկա, ճանաչողական փոխաբերույթ, երևակայական փոխաբերույթ, փոխաբերական միաձուլում, գիտաֆանտաստիկ փոխաբերույթի թարգմանություն:

Գիտաֆանտաստիկ փոխաբերությունը՝ գիտաֆանտաստիկայի «գրական-գեղարվեստական սիրտը» /Elgin 1996/, ճանաչողական և երևակայական փոխաբերությունների միախառնման արդյունք է, «փոխաբերական միաձուլման» արգասիք և հիմնված է գիտական, տեխնոլոգիական և սոցիալ-հասարակական փոփոխությունների, ձևափոխությունների, փոխակերպումների վրա:

Գիտաֆանտաստիկայի փոփոխության գաղափարախոսությունն արտացոլող և գիտաֆանտաստիկ ժանրի համար համընդհանուր և առաջնային հանդիսացող *Change is motion* /«Փոփոխությունը շարժում է»/ ճանաչողական փոխաբերությամբ, որը պատկանում է ճանաչողական փոխաբերության կառուցվածքային ամենամեծ խմբին, հավասարապես կիրառելի և հասկանալի է գրեթե բոլոր լեզուներում /Lakoff and Turner 1989; McArthur 1992, Saeed 1997/:

Մարդկային փորձը սովորաբար փոփոխությունն ընկալում է որպես առաջընթաց շարժում, զարգացում, աճ, վերելք, այսինքն՝ դրական փոփոխություն, ինչպես առաջնային փոխաբերության երկրորդային ենթափոխաբերություն՝ *Change is forward motion/progress/advancement* և ածանցյալ, երրորդային համարվող

տարբերակներում /*Scientific/technological change is progress; Emotional/psychological change is self-propelled motion*/: Այնուամենայնիվ, հակառակ շարժումը, այսինքն էտրնթացը, անկումը, ավերումը, ոչնչացումը նույնպես շարժման, փոփոխության արդյունք է: Այս բացասական շարժումը որոշիչ է գիտաֆանտաստիկ դիստոպիական գրականության մեջ, որտեղ արդեն գործում և իրացվում է առաջնային փոխաբերության *Change is backward motion/retrogression/regression* երկրորդային ենթափոխաբերությո՞ւր և երրորդային, բացասական առնչանակայնությամբ օժտված ճանաչողական այլ ենթափոխաբերություններ՝ *Scientific/technological change is destruction, Scientific/technological progress is emotional/psychological regress*:

Այսպիսով, մեծ կամ փոքր գիտա-տեխնոլոգիական, սոցիալ-հասարակական, պատմական և մշակութային փոփոխությունների արդյունքում ստեղծված *Change is motion* ճանաչողական փոխաբերություն արտացոլվում է փոփոխության /թիրախ/ ու շարժման /սկզբնաղբյուր/ հասկացություններին վերաբերող ենթափոխաբերություններում, որոնք նույնպես նպատակաուղղված են իրացնելու սոցիալ-հասարակական և գիտա-տեխնոլոգիական գործառույթներ:

Այն փաստը, որ մարդկային հուզաշխարհի, ներըմբռնման և համընդհանուր արժեքային համակարգի վրա հիմնված միևնույն փոխաբերություն օգտագործվում է տարբեր լեզուներում, վկայում է, որ իմացական տիրույթների մոդելավորումը

ճշգրտորեն համապատասխանում է մարդկային ուղեղի նյարդաբանական երկու տիրույթներին՝ բանական և հուզական: Ուրիշ խոսքով՝ մարդկային ճանաչողական համակարգն ինքնին փոխաբերական կառույց է, որի լեզվական արտահայտումը նախ և առաջ ճանաչողական փոխաբերություն է՝ իր իմացական/բանական, և երևակայական/հուզական տիրույթների հակադրամիասնությամբ: Հենց այս գոյաբանական հակադրամիասնության հենքի վրա էլ համատեքստում ձևավորվում է ոճական մակերևույթը՝ երևակայական փոխաբերությամբ: Ամփոփ ձևով ասված՝ սկզբում փոխաբերությամբ պարուրում է մարդկային միտքը /ճանաչողական փոխաբերությամբ/, ապա՝ հուզաշխարհը /երևակայական փոխաբերությամբ/: Այսպիսով, այն, ինչը մենք անվանում ենք «փոխաբերական միաձուլում»՝ երկու տեսակի փոխաբերությունների /ճանաչողական փոխաբերությամբ + երևակայական փոխաբերությամբ/ միասնությունն է:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ գիտաֆանտաստիկ ճանաչողական փոխաբերության կարճ, լակոնիկ ասույթները հզոր գեներատիվ ներուժի շնորհիվ տեղափոխվում են նոր, վերհասկացական տիրույթներ՝ առաջացնելով տարատեսակ պատկերային զուգորդումներ և վերածվելով բարդ երևակայական փոխաբերությունների, որոնք պատկերավոր արտահայտչամիջոցների համադրման շնորհիվ նպաստում են մարդկային կյանքին և գոյությանն առնչվող նոր բացահայտումներ կատարելու գործընթացին: Այսպիսի միաձուլ

փոխաբերություններում համեմատության թիրախն ու սկզբնաղբյուրը երբեմն պատկանում են այնպիսի անհամեմատելի տիրույթների, որ անհնարին է նշմարել ընդհանրությունը կամ փոխաբերության արժևորել առանց վերվերնշանային մակարդակ տեղափոխվելու, այսինքն տողերի արանքում թաքնված գեղագիտական նրբություններն ընկալելու:

Քանի որ գիտաֆանտաստիկայի հիմնական հասկացությունը՝ փոփոխությունը և *Change is motion* ճանաչողական փոխաբերությոը ավելի ցայտուն են դրսևորվում գիտատեխնիկական բացասական փոփոխություն ներկայացնող տարբերակներում, դիտարկենք *Technology is a threat to our survival* կամ *Scientific/technological change is destruction* ճանաչողական ենթափոխաբերությունների երևակայական ընդլայնման արդյունքում ստեղծված փոխաբերական միաձուլման հետևյալ օրինակները.

(1) *The gleaming metallic towers that surrounded him and continued onwards in never-ending multiplicity to beyond the horizon oppressed him; the whole busy, unheeding life of a world-metropolis cast him into the horrible gloom of isolation and pygmyish unimportance. [...] In the four months since the shattering fall of the Foundation, Haven's communication had fallen apart like*

a spider web under the razor's edge. And in other respects, the siege was even closer; for the shrouds of helplessness and doom had already invaded.

(Asimov, *Foundation and Empire*, pp. 74,135)

(2) *Gigantic. The words immense, monstrous, grotesque, massive, swollen, overpowering, beyond description. There on a mound rising above us, a bird of winds heaved with its own irregular breathing, its snake neck arching up into the gloom beneath the North Pole, supporting a head as large as a Tudor mansion; a beak that opened as slowly as the jaws of the most monstrous crocodile ever conceived, sensuously; ridges of tufted flesh puckered about two evil eyes, as cold as the view down into a glacial crevasse, ice blue and somehow moving liquidly; it heaved once more, and lifted its great sweat-coloured wings in a movement that was certainly a shrug.*

(Ellison, *I Have no Mouth, and I Must Scream*, p. 173)

Հեղինակների ստեղծած տարածամանակյա աշխարհներում գործող ոչնչացման միջոցներ ու տեսարաններ պատկերող խոսքային նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ համատեքստերին բնորոշ է ընդլայնված փոխաբերույթների պարունակող բարդ ոճական և շարահյուսական կառույցների

կիրառությունը: Ոճական հզոր ներուժով լիցքավորված փոխաբերությունները նաև ներկայացնում են կործանման միջոցները ստեղծած մարդկանց հուսահատությունը, ընկճվածությունն ու ցավը: Առաջին համատեքստում մարդկային բնակավայրերն ու երկիրը քարուքանդ անող ապագայի զինուժը տիեզերական ճակատամարտերում օգտագործվող ատոմային և հոգեբանական հզոր զենքերն են */mighty atomic and psychological weapons for galactic battle/*, երկրորդում՝ երրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում բանական համակարգչի կողմից ստեղծած, մարդկությանը գրեթե վերացրած անճոռնի էլեկտրոնային թռչունը */the grotesque electronic being called hurricane bird/*:

Առաջին համատեքստում փոխաբերական միաձուլման արդյունքը տարբեր փոխաբերական տարրերից բաղկացած բարդ փոխաբերություն է: Տարրերից յուրաքանչյուրն իր լրացուցիչ իմաստային երանգն է հաղորդում քաղաքի և այդտեղ բնակվող միայնակ հերոսի՝ Ռանդուի մտորումներին ու հույզերին: Ռանդուին ճնշում է մինչև հորիզոնը ձգվող աշտարակների անվերջ շարքը և իր սեփական անտեսվածության, անկարևորության և չնչինության զգացողությունը */towers that surrounded him and continued onwards in never-ending multiplicity to beyond the horizon; unheeding life of a world-metropolis; cast him into the horrible gloom of isolation and pygmyish unimportance/*: Հաջորդ ասույթը, որն ընդլայնված փոխաբերությո է և պարունակում է մեկ կլիշեացված փոխաբերությո */the shattering fall of the Foundation/*,

մեկ գեղարվեստական համեմատություն /*communication had fallen apart like a spider web under the razor's edge*/ և մեկ գործուն փոխաբերույթ /*the shrouds of helplessness and doom had already invaded*/, առավել ակնհայտ է բացահայտում նրա ընկճվածության պատճառը՝ տիեզերքում գտնվող Ֆաունդեյշն գերտերության անկումը և իր հայրենի փոքրիկ Հեյվըն թագավորության մոտալուտ վախճանը:

Գիտաֆանտաստիկայի հանրահայտ հեղինակ Հ. Էլլիսոնի պատմվածքից վերցրած երկրորդ համատեքստը սկսվում է քերականորեն սխալ, գիտակցության հոսք հիշեցնող բառային թվարկմամբ, որի բարձրացող աստիճանավորման վերին մակարդակը *beyond description /աննկարագրելի/* շարույթն է: Այս ասույթն անուղղակի փոխաբերույթ է, որը *gigantic, immense, monstrous, grotesque, massive, swollen, overpowering* ածականների միջոցով նկարագրում է մարդկության համար մահաբեր էլեկտրոնային թռչնին: Հաջորդող իննսունութ բառից բաղկացած, վերոնշյալ նկարագիրն ամբողջականացնող նախադասությունը ընդլայնված փոխաբերույթ է, որի կառույցն ընդգրկում է հաջորդական փոխաբերական ասույթներ՝ *a bird of winds /մակդիր/; its snake neck arching up into the gloom /գործուն փոխաբերույթ/; a head as large as a Tudor mansion /փոխանուն-համեմատություն/; a beak that opened as slowly as the jaws of the most monstrous crocodile ever conceived /փոխանուն-համեմատություն/; as cold as the view down into a glacial crevasse /փոխաբերական համեմատություն/; lifted its great sweat-coloured wings in a*

movement that was certainly a shrug /բարդ փոխաբերույթ/: Կարևոր ենք համարում նշել, որ *Scientific/technological change is destruction* ճանաչողական փոխաբերույթի *destruction* սկզբնաղբյուր-հասկացույթը վերաբերում է ոչ միայն ֆիզիկական, այլև հուզական, հոգեբանական ոչնչացմանը: Այս դեպքում ավելի բնորոշ է *Scientific/technological progress is emotional regress* ճանաչողական փոխաբերույթի իրացումը: Ոչնչացման գաղափարն ավելի ցայտուն է դրսևորվում պատմվածքի վերնագրում՝ *I Have no Mouth, and I Must Scream* /«Ես բերան չունեմ, բայց պետք է ճչամ»/, որն ամբողջ պատմվածքը պարուրող ընդլայնված փոխաբերույթ լինելուց բացի, նաև իմաստային անկանոնության վրա հիմնված անհամատեղելի փոխաբերույթ է: Անկանոնությունը հիմնված է բերան չունենալու և ճչալու անհամատեղելիության վրա, բայց լայն համատեքստը, ներգագնողությունն ու ներըմբռնումը օգնում են ընթերցողին գնահատել փոխաբերույթը և մեկնաբանել միայնակ հերոսի հուզաշխարհի առանձնահատկությունները. բանական համակարգիչը մարդկանց վերածել է հոգեբանորեն խեղաթյուրված էակների, հերոսը, որը հոգեպես և բարոյապես առողջ է՝ գիտակցում է իրավիճակի ողբերգականությունը, սակայն զրկված է նույնիսկ ինքնասպանություն գործելու կարողությունից, քանի որ գնդաձև մի էակ է:

Անդրադառնալով փոխաբերությունների թարգմանությանը, նշենք, որ թարգմանությունը հեշտանում է, երբ դիտարկվում է փոխաբերույթի

ճանաչողական հայեցակերպը, որը հիմնված է այն փաստի վրա, որ տարբեր մշակույթներ ու լեզուներ իմաստավորվում են միևնույն իմացական տիրույթում, կառուցում իրենց համակարգերը հասարակական համընդհանուր ճանաչողության դիրքերից: Այլ խոսքով, ազգային, մշակութային, պատմական տարբերությունները կարող են տարբեր լինել, բայց, հիմնականում մարդկային բոլոր հասարակությունները կառուցվում են միևնույն համընդհանուր հիմքի վրա, որն էլ պայմանավորում է միևնույն իմացական հայեցակերպը: Օբյեկտիվ իրականությունը, որի շրջանակներում իրացվում է այս կամ այն հասարակական կամ մշակութային կենսագործունեությունը, նույնը չէ, բայց որոշակիորեն նման է /Chitoran 1973:69/: Տարբեր մշակույթներ իմաստավորում են իրենց գոյությունը և հաղորդակցվում համընդհանուր, համազգային երևույթների ու առարկաների սահմաններում, ճանաչողական միևնույն տիրույթում, որի հիմքի վրա էլ կառուցվում է արդեն տարբեր ու բազմազան արտահայտումներով դրսևորվող երևակայական տիրույթը:

Ասվածը առավել բնորոշ է գիտաֆանտաստիկ փոխաբերությին, որը հիմնականում ոչ թե առանձին վերցված մեկ ազգի կամ մշակույթի կրողն է, այլ խարսխվում է համընդհանուր, համամարդկային մտածական մոդելների վրա: Սկզբնաղբյուր լեզվի ճանաչողական փոխաբերության ընկալումը դժվարություն չի ներկայացնում, իսկ այդ ընկալելիությունն էլ հեշտացնում է հաջորդող

երևակայական փոխաբերությի/ների մեկնության ու թարգմանության գործընթացը: Ընդ որում, տվյալ գործընթացի հետ կապված խնդիրը վերաբերում է ոչ թե թիրախ լեզվում սկզբնաղբյուր լեզվի այս կամ այն լեզվական միավորի համարժեք տարրի բացակայությանը, այլ թարգմանության մեջ ներգրավված երկու լեզուների մշակութային մտածական, իմացական ընդհանրությունների ընկալմանը /Snell-Hornby 1995, Katan 1999/: Ընկալելիությունից գատ, և՛ իմացական, և՛ երևակայական փոխաբերությունների թարգմանելիությունը պայմանավորված է նախ՝ սկզբնաղբյուր, ապա՝ թիրախ լեզվի լեզվական առանձնահատկություններով:

Այսպիսով, ըստ մեր մոտեցման գիտաֆանտաստիկ փոխաբերության թարգմանության գործընթացում առավելապես արժևորվում են սկզբնաղբյուր և թիրախ լեզուների իմացական-ճանաչողական տիրույթները, որոնց նույնության շնորհիվ հեշտությամբ տարրորոշվում է թիրախ լեզվի համարժեք ճանաչողական փոխաբերությի:

Գրականության ցանկ

1. Asimov, Isaac (1970) *Foundation and Empire*. New York: Avon.
2. Chitoran, D. (1973) *Elements of English Structural Semantics*. București: EDP.

3. Elgin, Suzette Haden (1999) *Láadan, the Constructed Language in Native Tongue*.
(Copyright 2002) <<http://www.sfw.org/members/elgin/Laadan.html>>, Accessed
June 26, 2015.
4. Ellison, Harlan (1973) *I Have no Mouth, and I Must Scream*.//More Stories From
the Hugo Winners. Isaac Asimov (ed.) Ct, Greenwich: Fawcett Publications, Inc.
5. Katan, D. (1999) *Translating Cultures: An Introduction for Translators, Interpreters
and Mediators*. Manchester: ST Jerome.
6. Lakoff, G. & M. Turner (1989) *More than Cool Reason: a Field Guide to Poetic
Metaphor*. Chicago: University of Chicago Press.
7. McArthur, Tom (1992) *The Oxford Companion to the English Language*. Oxford:
OUP.
8. Saeed, J. (1997) *Semantics*. Oxford: Blackwell Publishers Ltd.
9. Snell-Hornby, M. (1995) *Translation Studies: An Integrated Approach*. Amsterdam:
John Benjamins.

The Cognitive-Stylistic Peculiarities of Science Fiction Metaphor

The object of research in the present paper is science fiction metaphor – its presentation as a combination and convergence of cognitive and imaginative metaphors, a process named “metaphoric blending.” Of importance are the interpretation of the imaginative part of

science fiction metaphor and the comprehension of the universal, all-human cognitive models underlying it. Both aspects contribute greatly to the translation of science fiction metaphor.

Key words: science fiction, cognitive metaphor, imaginative metaphor, metaphorical blending, translation of science fiction metaphor.

Когнитивно-стилистические особенности метафоры в научной фантастике

Объектом исследования в данной статье является метафора научной фантастики – ее представление как конвергенции когнитивных и образных метафор, процесс под названием "метафорическое смешивание." Важное значение имеют толкование образной части метафоры научной фантастики и понимание всеобщих когнитивных моделей, лежащие в ее основе. Оба могут в значительной степени способствовать переводу научно-фантастической метафоры.

Ключевые слова: научная фантастика, когнитивная метафора, образная метафора, метафорическое смешивание, перевод научно-фантастической метафоры.